ԳԱՌԱՆԱՊԵՏԸ

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

Վանայ լիճը դառնալուր չէ, խաքանի,
Լիճ է, իրաւ, բայց պուճուր չէ, խաքանի,
Հովից քնքուշ, ծովից խոր է սիրտն Հայոց,
Իմ տրտունջի հունչը դուր չէ, խաքանի:

* * *

Մարդկանց ծովում մարդու կարօտ մնացի,
Փրփրած դետի նման քարոտ մնացի,
Զթողեցին հասնէի ծովն իմ Վանայ,
Հաղիւ մի բուռ արտ ու արօտ մնացի:

* * *

Արեւե՞լքն է դեղեցիկը, թէ՞ արեւմուտքն ահաւոր,
Արեւմո՞ւտքն է դեղեցիկը, թէ՞ արեւելքն ահաւոր,
Գեղեցիկ են ու ահաւոր, ահաւոր ու գեղեցիկ, —
Մէկի սիրտն է ահաւորը, խելքը միւսի ահաւոր:

* * *

Ինձ ո՞վ ծնեց, Հայոց սար ու ձորն ասեմ,
Արծիւն Հայոց, թէ իմ Հայոց լորն ասեմ,
Ամենասուրբ խօսքը մա՞յրն է, թէ Աստուած,
Մա՞յրս ծնեց ինձ, թէ՞ Աստուած, — ո՞րն ասեմ:

* * *

Մասիս դրի իր անունը, որ աւելի քաղցրանայ,
Հօր կարօտը որդուս հոգում քանի դնայ թանձրանայ,
Կը թանձրանայ, հաւատում եմ, կը քաղցրանայ աւելի,
Երբ էլ լինի՝ Մասիսիկս Մասիս պիտի բարձրանայ...

* * *

Լուսնի վրայ ես ման եկայ՝ չկար դարուն, ինձ նման,
Քարացել էր մահն ամէնուր ու տխրութիւնն, ինձ նման,
Ա՛խ, այստեղ էլ կեանք է եղել ու բանաստեղծ մի՝ դուցէ,
Թափառել է ու երազել անմահութիւն, ինձ նման...

Ես երգեցի՝ սիրտս բացած, երբ սրտերը փակ էին,
Ձեր թաքցրած լացը լացի, երբ երգերս ձաղ էին,
Ձաղ տեղուս դուրս բերեցի ձեր երկաթէ ժխորից
Մեղեդիներն Հայոց այս նուրբ, որ իմ կրծքի տակ էին...

* * *

Ասի՝ Աստծուն մարդն է ծնել՝ իրաւ խորն է Աստուած, հա՛,
Բայց անաստուած այս դարում էլ հարկաւոր է Աստուած, հա՛,
Քանզի հաւատն անհաւատի սեւ մեղքերն էր միշտ սանձում,
Ա՛խ, մարդն առանց խղճի ահի ահաւոր է, Աստուած, հա՛:

* * *

Արագածն ու Մասիս սարը իրար աչքով են անում՝
Տես, դարին տես՝ մեր մէջ անգամ մահուան սահման է դնում —
Խեղճ, սահման դիր քո մահուան դէմ՝ աչքս թարթեմ՝ էլ չկաս, —
Գաղանանո՞ւմ է մարդն, ասա, թէ՞ դեռ նոր է մարդանում...

* * *

Միշտ իմ գլխին դարս կանգնել՝ աներեւոյթ թրի պէս,
Ինձ իմ ճամբից հանել կ՚ուզէր՝ հունը փոխած ջրի պէս, —
Բայց ա՛խ, սեւ ջուր կը դառնային հուր գինիներն իմ երգի
Թէ իր խօսքը չանէր երգս՝ Սասնայ Դաւթի թրի պէս...

* * *

Արդեօք Աստուած կա՞յ, թէ չկա՞յ, կա՞յ թէ չկայ սատանան, —
Միտք եմ անում, լաւերն այսպէս՝ վատերն ինչքան չատանան —
Ու լաւ թէ վատ կեանքը ինքը պատասխան է ինձ դառնում՝
— Աստուած անմեղ մարդու մէջ է, մեղաւորն է սատանան...

* * *

Է՞ր ես տանջում, իմ հայր բրուտ, հասլուելով կաւն ասաւ,
— Թէ չտանջուես, մարդ չես դառնայ՝ կաւ մնալով, լաւն ասաւ, —
Ու երբ կաւը դաւի փոխուեց ու լցրեց թասն առաջին՝
— Այս մէկն անոյշ կենացն իմ հօր՝ գլգլալով դաւն ասաւ:

* * *

Աստուած, թէ կաս՝ իմ հայ ազգին այսպէս մաքուր միշտ պահիր,
Իր գլխի տէր մի լեռնաղբիւր, յաւերժին քոյր միշտ պահիր,
Որ հայ լեզուի Երեւանը մի նոր Անի չդառնայ,
Այս սպիտակ սպանդում էլ մեզ անչէջ հուր միշտ պահիր:

* * *

Կ՚ուզեմ երթալ աշխարհի դէմ, խաւարի դէմ ես մենակ,
Խաւարի դէմ մի ճրագի ու արեւի պէս՝ մենակ,
Ինչքան չար կայ՝ խելքի բերեմ իմաստութեամբ իմ խղճի,
Ինչքան բարի... ա՛խ, մայրիկ ջան, վայ թէ գտնեմ քեզ մենակ...

© National Library of Armenia

Օ՜, մուսայիս հուր վայրկեաններ՝ հանճարեցէք անճարիս,
Ամէն մէկդ լոյս գալիքի մի դար բերէք քնարիս,
Իսկ երբ մեռնեմ՝ այս լուսինն էլ, որպէս մի էջ տխրուրախ,
Թող յաւիտեան մօրս նման կախուի չիրմատնարիս:

* * *

Վիկտոր, ո՞րն է Հայոց աստղը, աստղերի մէջ անհամար,
Մի՞թէ իրաւ այն փոքրիկն է, որ հաղիւ է ժպտում յար, —
Ա՜խ, թէ նա է, ինչո՞ւ այսքան մեծ լոյս ունի հայ ոգին,
Ամենամեծ աստղերի մէջ՝ ամէն մեծի հաւասար...

* * *

Նստած նայում եմ կարօտով իմ ալեւոր Մասիսին,
Իմ պապերի պապերի սար, իմ վիրաւոր Մասիսին,
Միտք եմ անում, թէ պապերիս ի՞նչ պատասխան պիտի տամ,
Երբոր զարթնեն՝ դերի տեսնեն կալանաւոր Մասիսին:

* * *

Արարատին քար զարկողը քարն իմ սրտին է զարկում,
Սարս բանտող-չղթայողը սարն իմ սրտին է զարկում,
Վիշտս ոչ ոք չի հասկանում, բացի քեզնից, Արարատ· —
Քո վիշտն Հայոց վիշտն է միայն՝ դարն իմ սրտին է զարկում...

* * *

Հայրենիքի սիրուց քաղցր, բարձր մի սար դեռ չկայ,
Արագածի նման մի սար, Մասիսի պէս լեռ չկայ,
Եւ այս հրաշք Մասիսն անդամ ձեռակերտն է իմ Հայոց,
Բայց, ա՜խ, Հայոց վշտից ծանր ուրիշ մի լեռ դեռ չկայ...

* * *

Ողջոյն, ո՞վ հայ ճարտարապետ, ո՞վ հանճարեղ շինարար,
Որ երկնեցիր Երեւանը Թամանեանով մեծարար,
Քեզ են մնում Վանն ու Անին, Ղարսն ու Մուշը, որ հանես
Ծիծաղախիտ ծիածանէս Հայաստանը ծայրեծայր...

* * *

Մարգարիտը ես շաղ տուի, գարի տուողն հռչակուեց,
Աստղս մնաց սեւ ամպի տակ, հաղիւ մի շողն հռչակուեց,
Ահա թէ ինչ ամպեր անցան երկրի գլխով այս... անամպ,
Թաղուեց տաւիղն իմ հանճարեղ, շեփոր փչողն հռչակուեց:

* * *

Երբ հարցնում են՝ հաւատո՞ւմ ես, չեմ իմանում ի՞նչ ասեմ,
Հաւատամ էլ՝ բայց թէ հարցնեն ո՞ւր է մնում՝ ի՞նչ ասեմ, —
Աստծու միակ օթեւանը արթուն խիղճն է մարդկային,
Այն էլ հազար տարին մէկ է քնից զարթնում, ի՞նչ ասեմ:

(Շարունակելի)

• ԳՐԱԽՕՍԱԿԱՆ •

ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ 1800: Գրեց Սարգիս Դպիր Յովհաննիսեան: Հրատարակեց Արա Գալայճեան: Մեծ ուրբաթալ, թղթակազմ, 74 էջ: Երուսաղէմ, 1967:

Սարգիս Դպիր Յովհաննիսեան մեր ԺԸ· դարու վաստակաւոր գրողներէն եղած է, որուն Կ· Պոլսոյ այս շատ օգտակար տեղագրութիւնը՝ խնամքով հրատարակած է Սիոնի երիտասարդ եւ եռանդուն խմբագիրը՝ Արա Գալայճեան:

Սարգիս Դպիրի ինքնագիր «Վիպագրութիւնը» (իմա տեղագրութիւն) այժմ կը գտնուի Երուսաղէմի Ս· Յակոբեան վանքին մատենադարանը· ստացուած է Յով· քահանայ Մկրտեանի թուղթերուն հետ:

Սարգիս Դպիրէ ինքնագիր մը ալ կը գտնուի՝ ձեռագիրներու իմ հաւաքածոյիս մէջ եւ կը կրէ «Կանոնական Ցիշատակարան» խորագիրը իր անուանաթերթին վրայ, եւ գրուած է 1778 եւ կը կրէ Մաղաքիա Սրբդ· Օրմանեանի Մ· Օ· պարզ կնիքը, մանիշակագոյն մելանով, որ ցոյց կու տայ թէ այս ձեռագիրը ժամանակին պատկանած է իրեն:

Սարգիս Դպիրի Կ· Պոլսոյ այս տեղագրութիւնը օգտակար է իր բազմապիսի տեղեկութիւններով քաղաքին մասին եւ մասնաւորապէս Հայոց մասին: Կարելի է ամբողջացում նկատել Երեմիա Զէլէպիի (Քէօմիւրճեան) յանգագրեալ Կ· Պոլսոյ տեղագրութեան: Սարգիս Դպիրի տեղագրութենէն օգտուած է Բժշկ· Վահրամ Թորգոմեան՝ իր երկհատոր «Ստամպօլոյ Պատմութեան» մէջ (Վիեննա, Ա· հտ·, 1913 եւ Բ· հտ·, 1932):

Անտարակոյս արժէքաւոր բնագիր մը եւս՝ մոռացութենէ եւ կորուստէ կը փրկուի՝ այսպէս խնամքով հրատարակուելով՝ Երուսաղէմի Ս· Յակոբեանց նոր լով՝ Երուսաղէմի Ս· Յակոբեանց նոր ստացած տպարանէն: Շնորհակալութեան մեծ բաժին մը ալ հրատարակիչ Արա Գալայճեանին կ՚ուղղենք:

Սարգիս Դպիր յաճախ «հիճրէթի» թուական գործածած է: Լաւ կ՚ըլլար եթէ հրատարակիչը զանոնք վերածեր Քրիստոսի թուականին (ինչպէս նաեւ Հայոց թուականները): Այդպէսով ընթերցողին մեծապէս օգնած կ՚ըլլար՝ ընթերցումը անընդհատ շարունակելու համար: Կարեւոր էր նաեւ հրատարակութեան վերջը տեղերու եւ յատուկ անուններու ցանկը՝ որ դժբախտաբար զանց առնուած է եւ այժմ կը պակսի:

Մաղթենք որ Արա Գալայճեան շարունակէ իր այս կարեւոր հրատարակչական գործը՝ վանքին անհատնում մատենագրական գանձերէն: Անտարակոյս Պարիարք Եղիշէ Սրբազան իր քաջալերութիւնը եւ օժանդակութիւնը պիտի չզլանայ հրատարակչական այս աշխատութեան համար:

Յ· ՔԻՒՐՏԵԱՆ

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ: Ուսումնասիրուած և գծագրուած Առաքել Պատրիկէ: Փոքր քառածաւալ, լաթակազմ, 62 էջ ուսումնասիրութիւններ, ցուցակներ, մատենագիտութիւն եւ 82 գունաւոր եւ անգոյն գծագրութիւններ: Երեւան, 1967:

Մեծապէս գնահատելի եւ բազմաշխատ գործ մը է, հայկական ազգագրութեան, տարազին, արուեստին նուիրուած՝ այս արժէքաւոր հրատարակութիւնը:

Անմոռանալի մեծ պրպտողը, Հ· Վարդան Վրդ· Հացունի, ասկէ 40 եւ աւելի տարի առաջ, արդէն մեզի թողուցած էր իրապէս կոթողային գործ մը՝ Պատմութիւն հին հայ տարազին (Վենետիկ, 1924): Մինչ Հայր Հացունի շատ աւելի ոյժ կու տայ մատենագրական տուեալներու, Առաքել Պատրիկ մեծ խղճմտութեամբ իր նիւթը կը հաւաքէ քանդակներէ, մանրա-

© National Library of Armenia